



ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ 2016

Քո մասնակցությունն ունեցիր ավելի լավ Համացանց ունենալու գործում:

Դասի նպատակը-Սովորողներին իրազեկել, թե ինչպես ապահով և արդյունավետ օգտագործել համացանցի հնարավորությունները, ինչպես ճիշտ կողմնորոշվել համացանցում՝ չդառնալով խաբեության զոհ, ինչպես պաշտպանել համակարգիչը վիրուսներից, ինչպես դրսևորել օրինակելի վարք առցանց շփման ժամանակ: Պարզել, թե որոնք են համացանցից ներթափանցող հիմնական վտանգները: Մշակել կանոններ, որոնք կնպաստեն համացանցից ապահով և անվտանգ օգտվելուն, իսկ խորհուրդների միջոցով համացանցը դարձնել օգտակար միջավայր թե սովորողների և թե ծնողների համար:

Անհրաժեշտ սարքավորումներ-Համակարգիչ, պրոյեկտոր, դինամիկներ, պաստառներ:

Դասի պլանը

1. Դասի նպատակի ներկայացում և նախապատրաստական մաս: 5 րոպե
2. Համացանցի հնարավորությունների ներկայացում: 5 րոպե
3. Իրավիճակներ: 10 րոպե
4. Առաջադրանք1-<<Երեք աստղ ու մեկ ցանկություն: 5 րոպե
5. Առաջադրանք2-<<Օրիգամի>>: 10 րոպե
6. Առաջադրանք3-<<Իմ երազանքի Համացանցը>>: 5 րոպե
7. Ամփոփում: 5 րոպե

Դասի ընթացքը

1.Նախապատրաստական մաս

Տեխնոլոգիաներն արագորեն զարգանում են ու մեծ արագությամբ փոխում մարդու կենսակերպի բոլոր բնագավառները: Ինչևէ, զարգացումը լավ է այնքանով, որքանով այն ծառայում է հոգուտ մարդկությանը:

Այսօր աշխարհի բնակչության ավելի քան մեկ երրորդն օգտվում է համացանցից, և այս թիվը շարունակում է աճել: Դժվար է պատկերացնել մարդկային գործունեության որևէ բնագավառ, ուր թափանցած չլինի համացանցը:

Արդյո՞ք համամիտ եք այն մտքի հետ, երբ համացանցը համեմատում են լաբիրինթոսի հետ, որտեղ մարդիկ խճճվում են ինֆորմացիայի առատության մեջ:

Հարցադրումներ

Համացանցում ի՞նչն է ձեզ գրավում:

Համացանցում ի՞նչն է ձեզ հիասթափեցնում:

Արդյո՞ք համացանցի պատճառով պակասում է իրական շփումը մեր հարազատների հետ :

2. Համացանցի հնարավորությունների ներկայացում

Համացանցում գործում են բազում ծառայություններ, որոնք ճիշտ կիրառելիս այն դարձնում են անփոխարինելի գործիք: Արագագործ համացանցը հասանելի է դարձնում հեռուստատեսային ծառայություններ, ֆիլմերի, տեսահոլովակների, այլ տեսանյութերի դիտումներ: Համացանցը օգտագործողներին իրական ժամանակում հաղորդակցվելու հնարավորություն է տալիս, ինչպես գրավոր տեսքով, այնպես էլ ձայնային ու տեսաձայնային տարբերակով՝ նույն պահին լսելով և տեսնելով զրուցակցին: Էլեկտրոնային փոստն արդեն գրեթե ամբողջովին փոխարինել է սովորական փոստային ծառայությանը: Համացանցային ծառայությունները հնարավորություն են տալիս աշխարհի տարբեր ծայրերում գտնվող համակարգիչների միջև ֆայլերի փոխանակություն իրականացնել: Համացանցը նաև ժամանցի մի հսկայական տարածք է, որտեղ կարելի է գտնել առցանց (online) խաղեր, մրցույթներ, վիկտորինաներ: Սոցիալական ցանցերը, ֆորումները, բլոգները հնարավորություն են տալիս վերագտնել հին ծանոթներին, ձեռք բերել նույն հետաքրքրություններն ունեցող նոր ծանոթներ, ստանալ հուզող հարցերի պատասխանները և այլն: Սրանք միայն մի փոքր մասն են այն ոլորտների, որտեղ համացանցի շնորհիվ արմատապես փոխվել են մարդկանց ապրելու, շփվելու, սովորելու, աշխատելու և հանգստանալու ձևն ու հնարավորությունները:

3. Իրավիճակներ

Սովորողներին բաժանել 4-5 հոգուց բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է մի իրավիճակ՝ ընտրելով բանալի բառերը նշված ցանկից: Վերջում մշակում են այդ իրավիճակին համապատասխան խորհուրդ:

Կերպար	Տեղանք	Հոգեվիճակ	Հուշող բառեր
Ծնող	Դպրոց	Երջանիկ	նամակ
Ուսուցիչ	Այգի	Տխուր	զաղտնաբառ
Լավագույն ընկեր	Տուն	Վախեցած	վիրուս
Անծանոթ	Սրճարան	Բարկացած	ներբեռնել
Դասընկեր	Դասարան	Զարմացած	առցանց խաղ

Օրինակ՝ Անին դպրոցական է, սովորում է 8-րդ դասարանում: Նա սոցիալական ցանցով մի **նամակ** է ստանում **անծանոթից**, ով առաջարկում է իրեն հանդիպել **սրճարանում**: Սկզբում Անին **երջանիկ** էր, սակայն դիտելով անծանոթի նկարները, նա երկմտաքնի մեջ է ընկնում՝ գնալ հանդիպման, թե՛ ոչ:

Խորհուրդ- Անծանոթի հետ հանդիպելը այդքան էլ լավ միտք չէ: Այնուամենայնիվ եթե որոշել ես գնալ հանդիպման, այդ մասին տեղեկացրու ծնողներին:

Առաջադրանք1


3 աստղ և 1 ցանկություն

Սովորողներին բաժանել 4-5 հոգուց բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր խումբ լրացնում է Առաջադրանք1-ի թերթիկը և ներկայացնում:

Աստղերի մեջ սովորողները գրում են, թե ինչ են արել ավելի լավ Համացանց ունենալու համար(նրանք կարող են նկարագրել իրենց վարքը, թե ինչպես են հարգում և պատասխանում մյուսներին առցանց շփման ժամանակ, կարող են ներկայացնել համացանցում տեղադրած իրենց տեսահոլովակներն ու խորհուրդները), իսկ ամպի մեջ գրում են, թե ինչ են պատրաստավում անել Համացանցը օգտակար և ապահով միջավայր դարձնելու համար:





Հնարավորություն տալ սովորողներին համեմատել իրենց աստղերն ու ամպերը և ընտրեն լավագույնները:

Օրինակ



Առաջադրանք 1

3 աստղ և 1 ցանկություն



Առաջադրանք 2

Օրիգամի

Սովորողներին բաժանել 4-5 հոգուց բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր խումբ պատրաստում է իր օրիգամին և գրում 9 հարցեր իրենց պատասխաններով: Յուրաքանչյուր խումբ խաղի ձևով ստուգում է մյուս խմբի անդամների համացանցային գիտելիքները:

Օրիգամին պատրաստում ենք հետևյալ կերպ.



<p>1 Գնա՞լ հանդիպման «առցանց ընկերոջ» հետ:</p> <p>Հրաժարվիր հանդիպել անծանոթների հետ, եթե նույնիսկ նրանք քո «առցանց ընկերներն են»:</p> <p>Ավելի լավ է ապահով լինել, քան արհեստաբան լինել:</p>	<p>6 Ի՞նչ է համացանցային էթիկան:</p> <p>Հարգարժան է լինել սեփական և ուրիշների անձնական տեղեկությունների, ֆոտոյի և վիդեոյի նկատմամբ:</p>	<p>8 Ինչպե՞ս ընտել բառերով արձագանքել:</p> <p>Խնայող մտածված գաղտնաբերում և պետք է կազմված լինի արձագանքը: Քվեր և միջից, որը ներդառնում է ստանդարտ, թվեր և այլ նշաններ:</p>	<p>5 Արդյո՞ք ինքնուրույն կատարում են առցանց գնումներ:</p> <p>Միայն ծնողների իմացությամբ ու օգնությամբ կատարել առցանց գնումներ:</p>
<p>7 Ի՞նչ պլաներով կիրառվում է քո համացանցային օգտագործումը:</p> <p>Պաշտպանել ձեր համակարգիչը վիրուսներից և հակավիրուսային ծրագրերով միջոցով:</p> <p>Մի բացել անծանոթից աստղակա լինել կայքերում և նամակներով:</p>	<p>9 Եթե համացանցում խաբեության զոհ եր դարձել, ահազանգեր 60 272 212 թեժ գծի հեռախոսահամարով կամ այցելել safe.am կայք:</p>	<p>Ենտրիկը մի պատկեր է, որը արտահայտում է քո հույզերը համացանցում:</p>	
<p>2 Ի՞նչ է Էնտրիկը:</p> <p>Հոյակապ է լինել սեփական և ուրիշների անձնական տեղեկությունների, ֆոտոյի և վիդեոյի նկատմամբ:</p>	<p>3 Ի՞նչ է Էնտրիկը:</p> <p>Ենտրիկը մի պատկեր է, որը արտահայտում է քո հույզերը համացանցում:</p>	<p>4 Ի՞նչ է Էնտրիկը:</p> <p>Ենտրիկը մի պատկեր է, որը արտահայտում է քո հույզերը համացանցում:</p>	<p>7 Ի՞նչ է Էնտրիկը:</p> <p>Ենտրիկը մի պատկեր է, որը արտահայտում է քո հույզերը համացանցում:</p>
<p>3 Ի՞նչ է Էնտրիկը:</p> <p>Ենտրիկը մի պատկեր է, որը արտահայտում է քո հույզերը համացանցում:</p>	<p>4 Ի՞նչ է Էնտրիկը:</p> <p>Ենտրիկը մի պատկեր է, որը արտահայտում է քո հույզերը համացանցում:</p>	<p>5 Արդյո՞ք ինքնուրույն կատարում են առցանց գնումներ:</p> <p>Միայն ծնողների իմացությամբ ու օգնությամբ կատարել առցանց գնումներ:</p>	<p>6 Ի՞նչ է համացանցային էթիկան:</p> <p>Հարգարժան է լինել սեփական և ուրիշների անձնական տեղեկությունների, ֆոտոյի և վիդեոյի նկատմամբ:</p>

Առաջադրանք 3

Իմ երազանքի Համացանցը

Ինչպիսի՞ն է նրանց երազանքների Համացանցը:

Յուրաքանչյուր աշակերտ լրացնում է <<Իմ երազանքի Համացանցը>> թերթիկը:



Իմ երազանքի Համացանցը

